ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ՔԵԹԻԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ
Քեթի համայնք, Հեռ. (0312) 6-00-28

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ  N 34-Ն

«16» դեկտեմբերի 2015 թվականի  գյուղ Քեթի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՔԵԹԻԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթներով՝

Քեթիի համայնքի ավագանին **որոշում է**.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Քեթիի գյուղական համայնքի 2016 թվականի բյուջեն՝ համաձայն հավելվածի:

| Ավագանու անդամներ՝ | Կողմ (5) | Դեմ (0) | Ձեռնպահ (0) |
|---|---|---|---|
| Խաչատրյան Ռաֆայել | ---------------- | ---------------- | ---------------- |
| Խաչատրյան Սլավիկ | ---------------- | ---------------- | ---------------- |
| Մանուկյան Արտյոմ | ---------------- | ---------------- | ---------------- |
| Սահակյան Ռազմիկ | ---------------- | ---------------- | ---------------- |
| Սարգսյան Տիգրան | ---------------- | ---------------- | ---------------- |

Համայնքի ղեկավար  ԹՈՐԳՈՄ ՍԱՀԱԿՅԱՆ

«16» դեկտեմբերի 2015 թվական
գյուղ Քեթի

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Քեթի գյուղական
համայնքի ավագանու 2015 թվականի
դեկտեմբերի 16-ի թիվ 34-Ն որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՔԵԹԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ

## ԵԿԱՄՏԱՅԻՆ ՄԱՍ

| h/h | Եկամուտներ | Բյուջեի հոդված | Ընդամենը (հազար դրամ) |
|---|---|---|---|
| 1 | Հողի հարկ | 7131 | 1205.2 |
| 2 | Գույքահարկ շենքերի և շինությունների համար | 7131 | 89.2 |
| 3 | Գույքահարկ փոխադրամիջոցների համար | 7136 | 2591.9 |
| 4 | Տեղական տուրքեր | 7145 | 120.0 |
| 5 | Պաշտոնական դրամաշնորհներ (դոտացիա) | 7331 | 18779.4 |
| 6 | Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճար | 7415 | 611.6 |
| | **Ընդամենը եկամուտներ** | | 23397.3 |

## ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍ

| h/h | Ծախսեր | Բյուջեի հոդված | Ընդամենը (հազար դրամ) |
|---|---|---|---|
| 1 | Աշխատավարձեր և հավելավճարներ | 4111 | 15126.0 |
| 2 | Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ | 4112 | 998.0 |
| 3 | Էներգետիկ ծառայություններ | 4212 | 1110.0 |
| 4 | Կոմունալ ծառայություններ | 4213 | 855.0 |
| 5 | Կապի ծառայություններ | 4214 | 220.0 |
| 6 | Ապահովագրական ծախսեր | 4215 | 42.0 |
| 7 | Համակարգչային ծառայություն | 4232 | 40.0 |
| 8 | Տեղեկատվական ծառայություն | 4234 | 130.0 |
| 9 | Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 4239 | 150.0 |
| 10 | Մասնագիտական ծառայություններ | 4241 | 280.0 |
| 11 | Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում | 4251 | 750.0 |
| 12 | Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում | 4252 | 100.0 |
| 13 | Գրասենյակային նյութեր և հագուստ | 4261 | 150.0 |
| 14 | Տրանսպորտային նյութեր | 4264 | 930.0 |
| 15 | Հատուկ նպատակային այլ նյութեր | 4269 | 400.0 |
| 16 | Այլ նպաստներ բյուջեից | 4729 | 760.0 |
| 17 | Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին | 4819 | 150.0 |
| 18 | Պարտադիր վճարներ | 4823 | 20.0 |
| 19 | Պահուստային միջոցներ | 4891 | 1186.3 |
| | **Ընդամենը ծախսեր** | | 23397.3 |

Համայնքի ղեկավար ԹՈՐԳՈՄ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ՔԵԹԻԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ
Քեթիի համայնք, Հեռ. (0312) 6-00-28

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  N 35-Ա

«16» դեկտեմբերի 2015 թվականի    գյուղ Քեթի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՔԵԹԻԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 8-Ի N 27-Ն ՈՐՈՇՈՒՄԸ ՉԵՂՅԱԼ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 75-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը մերժելու մասին 2015 թվականի նոյեմբերի 6-ի N 03/11/2015-39-0036 որոշումը և Գագիկ Ադամյանի դիմումը՝ Քեթիի համայնքի ավագանին որոշում է.

1.Չեղյալ ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Քեթիի համայնքի ավագանու 2015 թվականի հոկտեմբերի 8-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Քեթիի համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության այլ հողամասի ուղղակի վաճառքով օտարելու մասին» թիվ 27-Ա որոշումը:

2.Հողամասի ձեռք բերման համար մուծված 457530(չորս հարյուր հիսունյոթ հազար հինգ հարյուր երեսուն) դրամ գումարը օրենքով սահմանված կարգով վերադարձնել քաղաքացի Գագիկ Ադամյանին:

| Ավագանու անդամներ՝ | Կողմ (5) | Դեմ (0) | Ձեռնպահ (0) |
|---|---|---|---|
| Խաչատրյան Ռաֆայել | [signature] | ---------------- | ---------------- |
| Խաչատրյան Սլավիկ | [signature] | ---------------- | ---------------- |
| Մանուկյան Արտյոմ | [signature] | ---------------- | ---------------- |
| Սահակյան Ռազմիկ | [signature] | ---------------- | ---------------- |
| Սարգսյան Տիգրան | [signature] | ---------------- | ---------------- |

Համայնքի ղեկավար [signature, seal]    ԹՈՐԳՈՄ ՍԱՀԱԿՅԱՆ

«16» դեկտեմբերի 2015 թվական
գյուղ Քեթի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
# ՔԵԹԻԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ
Քեթիի համայնք, Հեռ. (0312) 6-00-28

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 36-Ն

«16» դեկտեմբերի 2015 թվականի գյուղ Քեթի

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՔԵԹԻԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՀՈՂԵՐԻՑ ԱՃՈՒՐԴՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ,ՕՏԱՐՄԱՆ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին,2-րդ և 3-րդ մասերի դրույթներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Քեթիի համայնքի ավագանին որոշում է՝

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Քեթիի համայնքի սեփականությանը հանդիսացող սույն որոշման հավելվածում նշված գյուղատնտեսական նպատակային նշանակության,այլ հողատեսքի գործառնական նշանակության 5.08365 հեկտար հողամասը(անշարժ գույքի պետական գրանցման վկայական՝N 21102014-08-0042,տրված՝ «21»դեկտեմբերի 2014 թվական) գյուղատնտեսական գործունեության նպատակով օտարել աճուրդով:

2.Հաստատել աճուրդով օտարվող հողամասի մեկնարկային գինն ու պայմանները՝ համաձայն հավելվածի:

| Ավագանու անդամներ՝ | Կողմ (5) | Դեմ (0) | Ձեռնպահ (0) |
|---|---|---|---|
| Խաչատրյան Ռաֆայել | ---------- | ---------- | ---------- |
| Խաչատրյան Սլավիկ | ---------- | ---------- | ---------- |
| Մանուկյան Արտյոմ | ---------- | ---------- | ---------- |
| Սահակյան Ռազմիկ | ---------- | ---------- | ---------- |
| Սարգսյան Տիգրան | ---------- | ---------- | ---------- |

Համայնքի ղեկավար՝ ԹՈՐԳՈՄ ՍԱՀԱԿՅԱՆ

«16» դեկտեմբերի 2015 թվական
գյուղ Քեթի

ՀԱՎԵԼՎԱԾ
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Քեթիի համայնքի ավագանու 2015 թվականի
Դեկտեմբերի 16-ի թիվ 36-Ն որոշման

# ՑԱՆԿ

*Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզիՔեթիի համայնքի սեփականությանը համարվող գյուղատնտեսական նպատակային նշանակության, գյուղատնտեսական այլ գործառնական նշանակության հողերից աճուրդով օտարվող հողամասի*

| N | Հողամասի գտնվելու վայրը | Հողամասի ծածկագիրը | Հողամասի չափը (հեկտար) | Հողամասի նպատակային նշանակությունը | Հողամասի գործառնական նշանակությունը (հողատեսքը) | Օտարման նպատակը | Հողամասի նկատմամբ սահմանափակումների (ներառյալ՝ սերվիտուտների) առկայությունը | Օտարման եղանակը | Մեկ հեկտար հողամասի աճուրդով վաճառքի մեկնարկային գինը՝ (դրամ) | Տվյալ հողամասի աճուրդով վաճառքի մեկնարկային գինը (դրամ) | Հողամասի աճուրդով վաճառքի մեկնարկային գինը՝ կադաստրային արժեքի նկատմամբ (%) |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Գյուղ Քեթի | 08-119-0138-0002 | 5.08365 | Գյուղատնտեսական | Այլ հողատեսք | Գյուղատնտեսական գործունեություն | չկան | Աճուրդ | 90000 | 457528 | 100.0 |

ՔԵԹԻԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Թ.ՍԱՀԱԿՅԱՆ